ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՄԲԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Խորհրդի անդամ	Առաջարկներ	Նախարարության դիրքորոշում
«Մայր Հայաստան» ռազմական պատմության թանգարանի գիտական բաժնի վարիչ Արմեն Խաչատրյան	Ներկայացրել է առաջարկների գրավոր փաթեթ. Առաջարկ 1. Փոքր համայնքներում մարդկային ռեսուրսի սահմանափակման ռիսկի չեզոքացում • Կարգավորվող կետը. Գլուխ 2, Հոդված 10, Կետ 30. «Երիտասարդը կարող է միաժամանակ ընդգրկվել միայն մեկ երիտասարդական նախաձեռնող խմբում»: • Առաջարկվող փոփոխություն. Կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ. «Բացառություն կարող է սահմանվել սահմանամերձ բնակավայրերի կամ մինչև 5000 բնակիչ ունեցող համայնքների համար, որտեղ մարդկային ռեսուրսի սահմանափակության դեպքում երիտասարդը կարող է միաժամանակ ընդգրկվել առավելագույնը երկու տարբեր ուղղվածություն ունեցող նախաձեռնող խմբերում»: • Հիմնավորում. Փոքր բնակավայրերում ակտիվ երիտասարդների թիվը սահմանափակ է: Խիստ սահմանափակումը կարող է արհեստականորեն խոչընդոտել նոր նախագծերի ձևավորմանը, երբ նույն անձը ցանկանում է օգնել թե՛ բնապահպանական, թե՛ մշակութային խմբերին: Առաջարկ 2. 13–15 տարեկան պատանիների ներառականության և արդյունքի երաշխավորում (բյուջեի քվոտա) •Կարգավորվող կետը. Ձև 1, Բաժին 2, Կետ 5, Ենթակետ 7. «չեն մասնակցում մասնակցային բյուջետավորման գործընթացի քվեարկությանը»: • Առաջարկվող լրացում. Ձև 1-ի 3-րդ բաժնում («Նախաձեռնությունների շրջանակը») ավելացնել նոր կետ. «Մասնակցային բյուջետավորման նպատակով հատկացված ընդհանուր ֆինանսական միջոցներից սահմանվում է պարտադիր նվազագույն տոկոսային քվոտա (ոչ պակաս, քան 10-15%), որն ուղղվում է բացառապես 13–15 տարեկանների կողմից ներկայացված	Ընդունվել է մասնակի: Նախագիծը խմբագրվել է և հանվել է 30-րդ կետը: Չի ընդունվել. մասնակցային բյուջետավորման գործընթացը կարգավորվում է ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 2-ին հաստատված թիվ 1890-Ն որոշմամբ, որով նախագծերի համար քվոտավորում նախատեսված չէ:

	և մասնագիտական դրական եզրակացություն ստացած նախագծերի ֆինանսավորմանը»: • Հիմնավորում. Քանի որ 13–15 տարեկանները չունեն քվեարկելու իրավունք, չափահասների հետ բաց մրցակցության պայմաններում նրանց նախագծերը գրեթե միշտ դուրս կմնան: Հստակ քվոտան կապահովի նրանց աշխատանքի իրական արդյունքն ու մոտիվացիան, քանի որ նրանք կմրցեն միայն իրենց տարեկիցների հետ: Առաջարկ 3. Որոշումների կայացման թափանցիկություն և բողոքարկման մեխանիզմ • Կարգավորվող կետը. Ձև 1, Բաժին 5, Կետ 22, Ենթակետ 3 և Կետ 32 (նախագծի մերժումը ինքնուրույնության բացակայության կամ այլոց շահերը ներկայացնելու հիմքով): • Առաջարկվող լրացում. Կետ 32-ից հետո ավելացնել նոր կետ. «Մասնագիտական խմբի կողմից սույն հիմքով նախագծի մերժման դեպքում, երիտասարդական նախաձեռնող խումբն իրավունք ունի 3 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր բողոքարկել որոշումը համայնքի ղեկավարին կամ լիազոր մարմնին, որը պարտավոր է կազմակերպել կրկնակի լսում խմբի անդամների մասնակցությամբ»: • Հիմնավորում. Ինքնուրույնության բացակայության կամ «շահերի առաջմղման» գնահատումը կրում է հայեցողական բնույթ: Որոշումների կայացման կամայականությունը բացառելու և երիտասարդների իրավունքները պաշտպանելու համար անհրաժեշտ է ապահովել բողոքարկման հստակ ընթացակարգ: Առաջարկ	Չի ընդունվել առաջարկվող լրացուցիչ կարգավորումը. այն հակասում է մասնակցային բյուջետավորման գործընթացի կազմակերպման ընդհանուր տրամաբանությանը:
	4. Տեխնոլոգիական հավասարության ապահովում համայնքներում • Կարգավորվող կետը. Գլուխ 3, Հոդված 16, Կետ 53. «Աջակցության մեթոդների շրջանակում, հնարավորինս, պետք է կիրառել թվային և առցանց գործիքներ...»: • Առաջարկվող փոփոխություն. Կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Աջակցության մեթոդների շրջանակում կիրառվում են թվային և առցանց գործիքներ, ինչի նպատակով Լիազոր մարմինը և Համայնքը համատեղ	Չի ընդունվել. երիտասարդական միջավայրերի գործունեության կարգով և մեթոդաբանությամբ բոլոր կարգավորումներն արդեն իսկ սահմանված են, ուստի լրացուցիչ կրկնությունները բացառելու նպատակով նման ձևակերպումներ չեն կարող լինել:

	ապահովում են տեղական երիտասարդական կենտրոնների նվազագույն տեխնիկական հագեցվածությունը (համակարգչային տեխնիկա և կայուն ինտերնետ կապ)»: • Հիմնավորում. Որպեսզի թվային գործիքների կիրառումը չստեղծի անհավասարություն տարբեր սոցիալ-տնտեսական և տեխնիկական հնարավորություններ ունեցող համայնքների միջև, պետությունը պետք է ստանձնի նվազագույն տեխնիկական բազայի ապահովման դերը: Առաջարկ 5. Ընտանեկան և համայնքային միջավայրի աջակցության խթանում • Կարգավորվող կետը. Ձև 1, Բաժին 2, Կետ 8 (ծնողի համաձայնության վերաբերյալ դրույթ): • Առաջարկվող լրացում. Կետը լրացնել հետևյալ պարբերությամբ. «Համայնքային երիտասարդական աշխատողը կամ երիտասարդական կենտրոնը պարբերաբար կազմակերպում են իրազեկման հանդիպումներ 13–15 տարեկան պատանիների ծնողների կամ օրինական ներկայացուցիչների հետ՝ ծրագրի նպատակները ներկայացնելու և համայնքային աջակցության միջավայր ձևավորելու նպատակով»: • Հիմնավորում. Թեև իրավական տեսանկյունից ծնողի նախնական համաձայնությունը պարտադիր չէ, համայնքային մակարդակում ծնողների ներգրավումն ու իրազեկումը կնվազեցնեն հնարավոր թյուրըմբռնումները և կնպաստեն պատանիների ակտիվության խրախուսմանը ընտանիքի կողմից:	Չի ընդունվել. երիտասարդական միջավայրերի գործունեության կարգով և մեթոդաբանությամբ բոլոր կարգավորումներն արդեն իսկ սահմանված են, ուստի լրացուցիչ կրկնությունները բացառելու նպատակով նման ձևակերպումներ չեն կարող լինել:
«Թատերակետեր» թատերագիտական կայքի խմբագիր Տիգրան Մարտիրոսյանը	Երիտասարդական նախաձեռնող խմբերի քննադատական մտածողությունը զարացնելու համար անրաժեշտ են. 1. Երիտասարդի համար պետք է տեսանելի և օրինակելի լինի քննադատական, վերլուծական մտքի կրողը: Այդպիսին լինելու համար այդ անձինք՝ քննադատները, պետք է հնարավորություն ստանան իրենց մասնագիտական գործունեությունը ծավալելով ֆինանսական ինքնաբավություն ունենալ: 2. Պետք է լինեն արվեստի ճյուղերի քննադատական օնլայն հարթակներ, որտեղ մասնագիտական նյութերով հանդես կգան բնագավառի պրոֆեսիոնալները: Ուստի	Առաջարկը դուրս է նախագծով կարգավորվող իրավահարաբերությունների շրջանակից:

	2027 թվականի համար ԿԳՄՍ նախարարության առաջնային ծրագրերից դարձնել արվեստի բոլոր բնագավառների քննադատական ուղղվածության մեկ կամ երկու կայքերի ֆինանսավորումը: 3. Այդ կայքերի համար նախարարությունը ֆինանսավորման նախապայման կդարձնի տվյալ տարվա ծրագրի շրջանակում որոշակի քանակի գրականագիտական, կինոգիտական, թատերագիտական, երաժշտագիտական, պարագիտական, արվեստաբանական և ժամանակակից արվեստի քննադատության հոդվածների ստեղծումն ու հրապարակումը: 4. Անհրաժեշտ են նաև երիտասարդների, երիտասարդական նախաձեռնող խմբերի հանդիպումները, ներկայացումների, գրականության և արվեստի այլ ճյուղերի ստեղծագործությունների քննարկումները քննադատական համայնքի ներկայացուցիչների հետ: 5. Քննադատների մենթորությամբ բեմադրությունների քննարկումները կնպաստեն, որ երիտասարդների նախաձեռնողական խմբերն իրենց ներկայացումներին սիրողականից փոքր ինչ ավելի մասնագիտական մոտեցում ցուցաբերեն: 6. Քննադատների հետ հանդիպումներն ու քննարկումները կնպաստեն նաև, որ վերջիններիս հուշումներով երիտասարդական նախաձեռնողական խմբերը սոցիալական թատրոնի ձևաչափով բեմադրեն թմրամոլության և թմրանյութերի շրջանառության մեջ երիտասարդներին ներքաշելու գործընթացների դեմ արտահայտվող, դրանց վնասակարության մասին գաղափարն արվեստի ուժով սերմանող ներկայացումներ: 7. Երեխաների մասնակցությամբ այդ ներկայացումները կարող են շրջիկ թատրոնի տրամաբանությամբ ցուցադրվել տարբեր համայնքներում: 8. Երիտասարդական նախաձեռնող խմբերը իրենց ներկայացումների, տարածվող թռուցիկների բովանդակությամբ պետք է ներգրավվեն քրեական ենթամշակույթի, արվեստի անվան տակ դրա դրսևորումներից ժարգոնային, հայհոյախառն, ագրեսիվ խոսելակերպի տարածման դեմ պայքարում: Իրենց հասակակիցների միջավայրում, այդպիսի	

	դրամատիկական ներկայացումներ ցուցադրելով տարեկիցներին ետ պահեն այն կասկածից, թե տարիներով գովաբանված բարձր արժեքները ձևական բնույթ են կրում: 9. Նախաձեռնողական խմբերի հանդիպումներն ու քննարկումները թատրոնի մասնագետի հետ և երիտասարդները այդ մասնագիտության որոշ գործընթացների միջով անցնելով՝ գուցե և մեկ երկու աշակերտ ցանկանա արվեստի որևէ ճյուղի քննադատ դառնալ, ինչը թատերագիտություն բնագավառի սերնդափոխության ճգնաժամային վիճակում փրկօղակի դերկատարում կարող է ունենալ:	
Աշտարակի թիվ 5 ավագ դպրոցի ծնողական խորհրդի նախագահ Նվեր Սարգսյան	Ներկայացվել է գրավոր առաջարկ	Առաջարկի ներկայացման ձևաչափով պայմանավորված՝ այն տեղ չի գտել ամփոփաթերթում: Նախարարության դիրքորոշումը նույն ձևաչափով տրամադրվել է խորհրդի անդամին
Հայաստանի գործատուների հանրապետական միության ներկայացուցիչ Վարուժան Ավանեսյան	Նախագծի բազմաթիվ հոդվածներում նշված լավ հմտությունների շարքին տալ փափուկ հմտություններ սահմանումը՝ այն առավել ընդգրկուն դարձնելու նպատակով Գործատուների միությունը պատրաստ է ստանձնելու ընդհանուր գործընթացի մենթորությունը, աջակցությունը և մոնիթորինգը	Ընդունվել է ի գիտություն
Հայաստան «Էզդիների կրթությունը, գիտությունը, մշակույթը, սպորտը և էզդիաբնակ բնակավայրերը (էզդի բնակիչները)» ՀԿ նախագահ Հասան Թամոյան	առաջարկել է մեթոդաբանության մեջ ներառել երիտասարդի սահմանումը և նշել հստակ տարիքը առաջարկել է, որպեսզի օտարալեզու եզրույթները փոխարինվեն համարժեք հայերենով	Չի ընդունվել. երիտասարդի սահմանումը տրված է «Երիտասարդական քաղաքականության մասին» օրենքով և ենթաօրենսդրական ակտով կրկնություններ չեն կարող լինել: Ինչ վերաբերում է 13-15 տարեկան անձանցից կազմված երիտասարդական նախաձեռնող խմբերին, ապա նրանց տարիքային առանձնահատկություններով պայմանավորված՝ նախագծով տրվել է լրացուցիչ կարգավորում:
Արարատի մարզի Գեղանիստի միջնակարգ դպրոցի աշխարհագրության ուսուցիչ Տիգրան Ենգիբարյան	քանի որ նոր չափորոշչով նվազում է 12-րդ դասարանի երկրորդ կիսամյակում սովորողի ծանրաբեռնվածությունը, որի արդյունքում նա կարող է ներգրավվել երիտասարդական նախագծերում կամ կամավորական աշխատանքներում, առաջարկում է տարիքային սահմանը 13-15-ից դարձնել 17 կամ 18՝ այն փոխկապակցելով չափորոշչի փոփոխություններին	Չի ընդունվել. 16-ից բարձր տարիքի բնակիչների մասնակցային բյուջետավորմանը մասնակցելու պայմանները սահմանված են Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից մշակված մեթոդաբանությամբ, իսկ այս նախագծով, հաշվի առնելով նրանց տարիքային առանձնահատկությունները, լրացուցիչ կարգավորումներ են տրվել միայն 13-15 տարեկան բնակիչների համար:

ԿՋՆԱԿ-ի ուսուցիչների մասնագիտական զարգացման բաժնի մասնագետ Մխիթար Գասպարյանն	Նախագծի վերաբերյալ դիտարկումները կներկայացվեն Իրավական ակտերի հրապարակման միասնական հարթակում	Առաջարկները հարթակում դեռևս չեն ներկայացվել